

**Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում նոր ընդգրկված 320 դպրոցների
ինֆորմատիկայի ուսուցիչների վերապատրաստման դասընթացի
ծրագիր**

| | Թեմա | Ժամ |
|---|--|-----|
| 1 | <p>Գաղափար համակարգչային ցանցերի մասին: Ցանցերի անհրաժեշտությունը և կարևորությունը ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման գործում: Տեղային (լոկալ) և գլոբալ ցանցեր, դրանց տեսակները և համեմատությունները: Տեղեկություններ Ethernet տեսակի տեղային ցանցի կառուցվածքի մասին: Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանց (ՀԴԻՑ). նկարագրությունը, կառուցվածքը:</p> | 2 |
| 2 | <p>Ինտերնետ (համացանց) - Գլոբալ համակարգչային ցանց: Ընդհանուր տեղեկություններ համացանցի ծագման և զարգացման մասին: Տեղեկություններ IP հասցեների մասին: Համացանցին միանալու նախնական գիտելիքներ (սարքավորումներ, միացումներ, կարգավորումներ): Տեղեկություններ համացանցային արձանագրությունների մասին (HTTP, FTP, TELNET, SMTP, POP3, IMAP, HTTPS, SSL): Համաշխարհային ուստայն (WWW): Վեբ սերվերներ, դոմեյնային գոտիներ, վեբ հասցեներ: Տարբեր զննիչների (բրոուզերների) (առնվազն երկու) ուսումնասիրում: Համացանցային վիճակագրություն (օրինակ՝ google analytics):</p> | 3 |
| 3 | <p><u>Գործնական աշխատանք 1</u></p> <ul style="list-style-type: none"> • միացում համացանցին, կարգավորումների իրականացում, • աշխատանք տարբեր բրոուզերների հետ, ընդհանրությունների և տարբերությունների ուսումնասիրում, • աշխատանք Control Panel→Internet Options ներդիրների հետ, • աշխատանք ֆայլերի հետ, • հասցեների պահպանում, պանակների ստեղծում, • FTP ծառայության օգտագործում, • հակավիրուսային ծրագրերի տեղադրում և թարմացում, • վիճակագրության ուսումնասիրում, տվյալների համեմատում և վերլուծություն: | 2 |
| 4 | <p>Գաղափար համացանցի անվտանգ օգտագործման մասին. համակարգչային վիրուսներ և հակավիրուսային ծրագրեր, անցանկալի կայքեր և բովանդակային ֆիլտրեր:</p> | 3 |

| | | | |
|---|--|---|--|
| | <p>Ընդհանուր տեղեկություններ համացանցի հնարավորությունների մասին.</p> <ul style="list-style-type: none"> • համացանցի որոնման համակարգեր, • պորտալներ, կայքեր, սոցիալական միջավայրեր (ցանցերի), վեբ-օրագրեր (blog), առցանց հաղորդակցման ծրագրեր, • նորագույն տեխնոլոգիաները (առցանց առևտուր, web 2.0 և այլն) և դրանց կիրառությունները, • համաշխարհային գիտակրթական և մշակութային պորտալներ, կայքեր, ազատ գրադարաններ, վեբ միջավայրեր ու ծառայություններ, • հեռավար ուսուցում, էլեկտրոնային կառավարում ու փաստաթղթաշրջանառություն: | | |
| 5 | <p><u>Գործնական աշխատանք 2</u></p> <ul style="list-style-type: none"> • որոնում և շրջագայում համացանցում, • աշխատանք պորտալների, կայքերի, գրադարանների, սոցիալական միջավայրերի հետ, • անձնական վեբ օրագրի (blog) և վեբ միջավայրերի (wikispaces) ստեղծում, • համաշխարհային գիտակրթական և մշակութային պորտալների, կայքերի ցանկերի* ստեղծում, • դասի պլանի* կազմում, նոր պաշարի* ստեղծում` համացանցի կրթական պաշարների կիրառմամբ: | 3 | |
| 6 | <p>Տեղեկություններ համացանցում գործող հայալեզու և հայկական կրթական պաշարների մասին:</p> <p>ՀԴԻՑ-ի կենտրոնական հանգույցի պաշարների նկարագրությունը:</p> <p>«Կրթական համալիր էջ» պորտալի կառուցվածքը և ընձեռած հնարավորություններն ու ծառայությունները:</p> <p>Հայաստանի դպրոցների կայքերը, կառուցվածքը, բովանդակությունը, զարգացման ուղիները: Դպրոցական վեբ կայքի բովանդակության, կառուցվածքի և զարգացման առաջարկների* մշակում,</p> | 2 | |
| 7 | <p><u>Գործնական աշխատանք 3</u></p> <ul style="list-style-type: none"> • հայալեզու և հայկական կրթական պաշարների ցանկերի* ստեղծում, • հայերեն և ռուսերեն Unicode ու ASCII տառատեսակներ: ArmNLS և KDWin ծրագրեր: Տառատեսակների և ծրագրերի տեղադրում, օգտագործում, փոխարկիչ ծրագրերի կիրառում, • «Կրթական համալիր էջ» պորտալի պաշարների ուսումնասիրություն և զարգացման առաջարկների* կազմում, • աշխատանք պորտալի «Վիրտուալ հանդիպում» բաժնում (ֆորումներ, խորհրդատվություն, խորհրդաժողով, քվեարկություններ), • գործնական աշխատանքների ընթացքում ստեղծված պաշարների (*-ով նշված) վերբեռնում պորտալի «Ավելացնել պաշար» ծառայության օգնությամբ: | 2 | |

| | | |
|------------------|---|-----------|
| 8 | <p>Գաղափար էլեկտրոնային փոստի, փոստային սերվերների, սպասարկման ծրագրերի, փոստի հասցեի և դրա կառուցվածքի մասին: Web տեխնոլոգիաների վրա հիմնված էլեկտրոնային փոստ (hotmail, yahoo, gmail, freenet, hord):</p> <p>Mail Clients (Outlook Express)-ի կարգավորումները, pop3/smt օգտագործող սերվերների աշխատանքի սկզբունքները, առաջացող դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները:</p> <p>ՀԴԻՑ-ի միասնական էլեկտրոնային փոստային տարածքի (mail.schools.am) նկարագրությունը:</p> | 2 |
| 9 | <p><u>Գործնական աշխատանք 4</u></p> <ul style="list-style-type: none"> • էլեկտրոնային փոստի սպասարկման ծրագրերի հետ աշխատելու հմտություններ՝ նոր հասցեի և օգտագործողի ստեղծում, տեղադրում MS Outlook համակարգում, • նոր հաշվի գրանցում (Account), նոր մամակի ստեղծում (CC, BCC), ամրակցում (attach), նկարի ներմուծում, տեքստային տարբեր ձևերի օգտագործում (rich and plain text format), • մամակների ստացում (Receiving mail), պատասխանի (reply, reply all), փոխանցման (forward), լրկալ պանակների ստեղծման և կառավարման աշխատանքներ, • աշխատանք կարգավորումների (Options), կոնտակտների և խմբերի (Contacts and groups) և հաղորդագրությունների կանոնների (Message rules) հետ: | 2 |
| 10 | <p>Տեղեկություններ անհատական, առարկայական, մասնագիտական խմբի կամ հաստատության փոքր կայքերի, վեբ-օրագրերի, սոցիալական միջավայրերի կաղապարների մշակման կառուցվածքային ու բովանդակային պահանջների մասին:</p> <p>Փոքր կայքերի, վեբ-օրագրերի ստեղծման համար գոյություն ունեցող հայտնի ազատ՝ բաց կոդով ստեղծված կաղապարների ներկայացում:</p> | 1 |
| 11 | <p><u>Գործնական աշխատանք 5 (Ավարտական աշխատանք)</u></p> <p>դպրոցի ինտերնետային կայքի մշակում՝ ուսումնասիրված ազատ՝ բաց կոդով կաղապարներից մեկի հիման վրա (վերապատրաստվողները պետք է նախապես տեղեկացվեն, որ այս աշխատանքը կատարելու համարանհրաժեշտ են լուսանկարներ, դպրոցում ստեղծված բովանդակային ու կրթական նյութեր և այլն):</p> <p><i>Ստեղծված կայքերը կտեղադրվեն ՀԴԻՑ-ի կենտրոնական հանգույցում՝ «Հայաստանի դպրոցների ինտերնետային կայքեր» բաժնում:</i></p> | 6 |
| ԸՆԴՀԱՆՈՒՄ | | 28 |